

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԽԱՂ ՄՐՅՈՒՅԹ

2014-2015թթ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

www.ipr-center.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
1. Մրցույթի թեման և խնդիրը (գործը).....	4
2. Թիմերը.....	5
3. Թիմի նույնականացման համարը.....	6
4. Մրցույթին գրանցվելու կարգը.....	6
5. Մրցույթի կառուցվածքը.....	6
5.1. Գրավոր մրցափուլ.....	6
5.2. Բանավոր մրցափուլ.....	8
5.3. Միակողմանի ընթացակարգ.....	11
6. Գնահատման կարգը.....	11
6.1. Գրավոր աշխատանքների գնահատում.....	11
6.2. Բանավոր ելույթների գնահատում.....	12
6.3. Միավորների հաշվարկում.....	13
7. Արբիտրները.....	15
7.1. Արբիտրների ընտրության կարգը.....	15
7.2. Արբիտրների հուշագրի գաղտնիությունը.....	15
7.3. Թիմի կրկնակի քննումը միևնույն արբիտրի կողմից.....	15
7.4. Մրցույթի ժամանակ արբիտրի և բուհերի ներկայացուցիչների միջև կապը.....	16
8. Հետախուզման անթույլատրելիություն.....	17
9. Տույժեր.....	17
9.1. Գրավոր աշխատանքների նկատմամբ կիրառվող տույժեր.....	17
9.2. Գրավոր աշխատանքների նկատմամբ կիրառվող տույժերի չափը.....	18
9.3. Գրագողություն (Պլագիատ).....	19
9.4. Բողոքարկման ընթացակարգ.....	19
9.5. Արբիտրների կողմից տույժերի կիրառման բացառումը.....	20

9.6. Բանավոր փուլերում կիրառվող սույժերը.....	20
9.7. Տույժերի մասին ծանուցում և բողոքարկում.....	21
10. Եզրափակիչ դրույթներ	21
10.1. Զգուշացումներ և խնդրանքներ	21
10.2. Տեսագրում և ձայնագրում.....	21
10.3. Համակարգիչներից, բջջային հեռախոսներից կամ այլ էլեկտրոնային սարքավորումներից օգտվելը	22
10.4. Մրցանակներ.....	22

www.ipr-center.org

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության իրավունքի մեջ մասնագիտացված «Կնյազյան ընդ Փարթնրս» իրավաբանական գրասենյակի (Knyazyan & Partners IP Law Firm – www.knyazyanlaw.com) կողմից նախաձեռնված այս մրցույթը (այսուհետ՝ «Մրցույթ») մտավոր սեփականության իրավունքի բնագավառին նվիրված մրցույթ է, որը Հայաստանում անցկացվում է 2010թ.-ից:

Մրցույթը նպատակ է հետապնդում նպաստել ուսանողների կողմից մտավոր սեփականության իրավունքի բնագավառի առավել խորը ուսումնասիրմանը, տվյալ բնագավառի փաստաբանական գրավոր և բանավոր հմտությունների զարգացմանը, ինչպես նաև՝ ընդհանրապես մտավոր սեփականության իրավունքի և դրա պաշտպանության կարևորության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը:

Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է «Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ «Կազմակերպիչ») կողմից և հանդիսանում է վերջինիս ամենամյա ծրագիրը:

1. ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵՄԱՆ ԵՎ ԽՆԴԻՐԸ (ԳՈՐԾԸ)

1.1. Մրցույթի թեման և խնդիրն առնչվում է բացառապես մտավոր սեփականության իրավունքի բնագավառի հետ:

1.2. Յուրաքանչյուր տարի Մրցույթի թեման և խնդիրը փոխվում է: Մրցույթի տվյալ տարվա բոլոր մրցափուլերն անցկացվում են այդ տարվա թեմայով/խնդրով և բոլոր թիմերն իրենց գրավոր աշխատանքներն ու բանավոր ելույթները պատրաստում են միևնույն թեմայի և խնդրի շրջանակներում:

1.3. Յուրաքանչյուր հաջորդ տարվա Մրցույթի թեման կարող է առաջարկվել ցանկացած անձի կողմից, սակայն թեմայի վերջնական ընտրությունը և խնդրի մշակումը կատարվում է Մրցույթի Կազմակերպչի կողմից և (կամ) համաձայնությամբ:

1.4. Մրցույթի տվյալ տարվա խնդիրը Կազմակերպչի կողմից հրապարակվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում:

1.5. Թիմերը կարող են տվյալ տարվա խնդրի վերաբերյալ պարզաբանումների և ուղղումների խնդրանքով գրավոր դիմել Կազմակերպչին մինչև Մրցույթի պաշտոնական ժամանակացույցում նշված ամսաթիվը: Բոլոր թիմերից ստացված խնդրագրերի հիման վրա Կազմակերպիչը Մրցույթի ժամանակացույցում նշված օրը կհրապարակի տվյալ տարվա խնդրի վերաբերյալ պարզաբանումները և ուղղումները: Յուրաքանչյուր թիմ պետք է ծանոթանա տվյալ տարվա խնդրի վերաբերյալ հրապարակված պարզաբանումներին և ուղղումներին:

2. ԹԻՄԵՐԸ

2.1. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողները (ներառյալ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի):

2.2. Մրցույթին չեն կարող մասնակցել այն ուսանողները, որոնք Մրցույթին մասնակցելու ընթացքում աշխատում են իրավաբանական գրասենյակներում կամ որևէ այլ ընկերություններում (կամ) կազմակերպություններում (մասնավոր, պետական, առևտրային կամ ոչ առևտրային), կամ հաճախում են իրավաբանական կլինիկաներ, որտեղ նրանք առնչվում են մտավոր սեփականության իրավունքի բնագավառի հետ և կարող են անհավասար պայմաններում գտնվել նման առավելություններ չունեցող այլ մասնակիցների նկատմամբ:

2.3. Յուրաքանչյուր բուհից մասնակցության հայտ կարող են ներկայացնել մեկ և ավել թիմեր: Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ 2-5 (երկուսից հինգ) անդամ:

2.4. Թիմի անդամները կարող են ընտրվել տվյալ բուհի կողմից կազմակերպված ներբուհական Մրցույթով կամ բուհի իրավասու մարմնի կողմից հաստատված ցանկացած այլ եղանակով:

2.5. Թիմի անդամի փոփոխությունը չի խրախուսվում, սակայն որևէ թիմ, որը Կազմակերպչին, Մրցույթի բանավոր փուլից առնվազն 30 (երեսուն) օր առաջ, ներկայացնի գրավոր դիմում՝ հիմնավոր պատճառաբանություններով առ այն, որ թիմի տվյալ անդամի մասնակցությունն անհնար է և անհրաժեշտ է փոխարինել այլ անդամով, Կազմակերպիչը դիմումը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կկայացնի որոշում դիմումը բավարարելու կամ մերժելու մասին: Թիմի կողմից ներկայացված դիմումը պետք է ստորագրված և կնքված լինի տվյալ բուհի ղեկանի կամ փոխղեկանի կողմից:

2.6. Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ մարզիչ, որը պետք է լինի տվյալ բուհի դասախոս, տվյալ բուհի անունից Մրցույթի նախկին մասնակից, ինչպես նաև Մրցույթի կազմակերպմանը և անցկացմանը չմասնակցող ցանկացած այլ անձ:

2.7. Մարզիչը կարող է բացառապես ուղղորդել թիմերին պատրաստվելու Մրցույթի գրավոր և բանավոր փուլերին (օր.՝ պարզաբանել մտավոր սեփականության իրավունքին վերաբերող ընդհանուր հարցերը, գրավոր կամ բանավոր հմտություններին վերաբերող հարցերը, ծանոթացնել հետազոտության աղբյուրներին, մեթոդներին, հայցադիմումը գրելու տեխնիկայի վերաբերյալ ընդհանուր և նմանատիպ այլ հարցերին), սակայն իրավունք չունի տվյալ տարվա խնդրին առնչվող որևէ առարկայական օգնություն ցուցաբերել (օր.՝ թիմերի փոխարեն կատարել որևէ հետազոտություն, գրել գրավոր աշխատանքները կամ պատրաստել բանավոր ելույթներ):

3. ԹԻՄԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆՄԱՆ ՀԱՄԱՐԸ

3.1. Մրցույթի Կազմակերպչի կողմից յուրաքանչյուր թիմին տրվում է նույնականացման համար (այսուհետ՝ «Համար»), որի նպատակն է ապահովել թիմերի և թիմի անդամների արդար և անաչառ գնահատումը:

3.2. Ուսանողներին խստիվ արգելվում է արբիտրներին կամ այլ անձանց հայտնել, թե իրենք որ համալսարանն են ներկայացնում: Այս կանոնը խախտելու դեպքում կիրառվում են սույժեր:

4. ՄՐՑՈՒՅԹԻՆ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Յուրաքանչյուր թիմ, որը ցանկանում է մասնակցել Մրցույթին, պետք է Մրցույթի Կազմակերպչի կողմից սահմանված ժամկետում ներկայացնի մասնակցության հայտ և պահանջվող այլ փաստաթղթեր: Մասնակցության հայտը կարող է ներբեռնվել Կազմակերպչի կայքէջից՝ <http://ipr-center.org/hy/ip-moot-court>:

4.2. Կազմակերպչի կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկվեն Կազմակերպչին՝ info@ipr-center.org էլ-փոստին:

4.3. Մրցույթին գրանցվելը և մասնակցելն անվճար է:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մրցույթը բաղկացած է գրավոր և բանավոր փուլերից, որոնք անցկացվում են Կազմակերպչի կողմից՝ սահմանված ժամանակացույցով: Մրցույթի ժամանակացույցը կարող է ներբեռնվել Կազմակերպչի կայքէջից՝ <http://ipr-center.org/hy/ip-moot-court>:

5.1. Գրավոր մրցափուլ

Մրցույթի գրավոր փուլին մասնակցելու համար թիմը պետք է ներկայացնի երկու գրավոր աշխատանք՝ հայցվորի հայցադիմումը և պատասխանողի պատասխանը, որոնց էլեկտրոնային MS Word և PDF օրինակները պետք է ուղարկվեն info@ipr-center.org էլ-փոստին՝ Մրցույթի ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

5.1.1. Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջները

5.1.1.1. Գրավոր աշխատանքների տեքստը պետք է.

ա) կազմված լինի հայերեն լեզվով,

բ) տպագրված լինի Sylfaen տառատեսակով և 12 տառաչափով, բացառությամբ ստղատակի ծանոթագրությունների, որոնք պետք է լինեն 10 տառաչափով,

գ) լինի կրկնակի տողաբացվածքով (double-spaced), բացառությամբ տողատակի ծանոթագրությունների և խորագրերի, որոնք պետք է լինել միաբացվածքով (single-spaced),

դ) տպագրվի A4 միջազգային ստանդարտներով (21×29 3/4սմ):

5.1.1.2. Գրավոր աշխատանքներում 60 (վաթսուն) բառը գերազանցող մեջբերումները պետք է գրվեն առանձին պարագրաֆներով:

5.1.1.3. Գրավոր աշխատանքները պետք է ունենան հետևյալ լուսանցքները (margins)՝ վերևից (top) 1,5 սմ, իսկ ներքևից (bottom) և աջ (right) ու ձախ (left) կողմերից՝ 2.0 սմ:

5.1.1.4. Գրավոր աշխատանքների բաժինները պետք է լինեն համարակալված:

5.1.2. Գրավոր աշխատանքները պետք է ունենան.

ա) տիտղոսաթերթ,

բ) բովանդակություն,

գ) *օգտագործված գրականության ցանկ*, որը պետք է ներառի գրավոր աշխատանքի ցանկացած հատվածում օգտագործված բոլոր հղումները, ինչպես նաև կոնկրետ էջերի համարները, որտեղ նշվում է տվյալ աղբյուրը,

դ) *արբիտրաժում լուծման ենթակա հարցերը*,

ե) *գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի շարադրությունը*, որը սահմանափակվում է բացառապես Մրցույթի խնդրում (գործում) ներկայացված փաստերով, Մրցույթի դատական գործից բխող անհրաժեշտ հետևություններով, այդ գործի պարզաբանումներով և չպետք է պարունակի չապացուցված, խեղաթյուրված փաստեր, վիճահարույց հայտարարություններ կամ իրավական եզրակացություններ,

զ) *փաստարկների համառոտագիրը*,

է) *փաստարկները* (յուրաքանչյուրը՝ համապատասխան վերլուծություններով և եզրակացություններով),

ը) *եզրակացությունը* (արբիտրներին ուղղված պահանջը/խնդրանքը):

5.1.3. Տիտղոսաթերթ

5.1.3.1. Յուրաքանչյուր հայցադիմումի և պատասխանի տիտղոսաթերթի վրա պետք է նշված լինի հետևյալը՝

ա) թիմի նույնականացման համարը (տիտղոսաթերթի վերևի աջ անկյունում)՝ «ԹԻՄ Հ-____» և «ԹԻՄ Պ-____», որոնք կնշվեն Կազմակերպչի կողմից (տպված օրինակների վրա)՝ գրավոր աշխատանքները ստանալուց հետո:

- բ) արբիտրաժի անվանումը՝ «Մտավոր սեփականության իրավունքի հարցերով արբիտրաժ»,
- գ) փաստաթղթի անվանումը (Հայցադիմում կամ Պատասխան),
- դ) գործի անվանումը և կողմերի անունները,
- ե) Մրցույթի անցկացման վայրը և տարեթիվը:

5.2. Բանավոր մրցափուլ

5.2.1. Մրցույթի բանավոր փուլին կարող են մասնակցել գրավոր փուլին մասնակցած բոլոր թիմերը:

5.2.2. Բանավոր փուլում իրենց հակառակորդներին թիմերը ընտրում են վիճակահանության միջոցով: Կայացած ընտրությունը հաստատվում է Կազմակերպչի կողմից և փոփոխության ենթակա չէ:

5.2.3. Բանավոր մրցափուլը բաղկացած է 4 (չորս) փուլերից.

- Նախընտրական փուլ,
 - Առաջին մրցափուլ,
 - Երկրորդ մրցափուլ,
 - Երրորդ մրցափուլ,
 - Չորրորդ մրցափուլ,
- Քառորդ եզրափակիչ փուլ,
- Կիսաեզրափակիչ փուլ,
- Եզրափակիչ փուլ:

5.2.4. **Քառորդ եզրափակիչ մրցափուլ:** Եթե նախընտրական մրցափուլերին մասնակցում են 16-ից ավել թիմեր, ապա քառորդ եզրափակիչը կանցկացվի նախընտրական մրցափուլերում 8 (ութ) ամենաբարձր միավորներ հավաքած թիմերի միջև՝ որոշելու համար, թե նրանցից որ մեկն է անցնելու կիսաեզրափակիչ: Քառորդ եզրափակիչ փուլում զույգերի բաժանումը կատարվում է հետևյալ կերպ՝

5.2.4.1. առավելագույն միավորներ հավաքած թիմն ընդդեմ հինգերորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմի,

5.2.4.2. երկրորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմն ընդդեմ վեցերորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմի,

5.2.4.3. երրորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմն ընդդեմ յոթերորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմի,

5.2.4.4. չորրորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմն ընդդեմ ութերորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմի:

5.2.5. **Կիսաեզրափակիչ մրցափուլ:** Եթե նախընտրական մրցափուլերին մասնակցում են 16 (տասնվեց) կամ ավել թիմեր, ապա քառորդ եզրափակիչի 4 (չորս) ամենաբարձր միավորներ հավաքած թիմերն անցնում են կիսաեզրափակիչ փուլ, որտեղ կորոշվի, թե որ թիմերն են անցնելու եզրափակիչ փուլ: Կիսաեզրափակիչ փուլում գույգերի բաժանումը կատարվում է հետևյալ կերպ՝

5.2.5.1. առավելագույն միավորներ հավաքած թիմն ընդդեմ երրորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմի, և

5.2.5.2. երկրորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմն ընդդեմ չորրորդ ամենաբարձր միավորներ հավաքած թիմի:

5.2.6. Եթե նախընտրական մրցափուլին մասնակցում են 6 (վեց) կամ ավելի թիմեր, ապա քառորդ եզրափակիչ փուլ չի անցկացվում, իսկ կիսաեզրափակիչ մրցափուլն անցկացվում է նախընտրական մրցափուլերում 4 (չորս) ամենաբարձր միավորներ հավաքած թիմերի միջև և գույգերի բաժանումը կատարվում է 5.2.5. կետում նախատեսված կարգով:

5.2.7. Նախընտրական փուլում յուրաքանչյուր թիմ մրցում է հակառակորդ 2 (երկու) հայցվոր և 2 (երկու) պատասխանող թիմերի հետ: Բոլոր 4 (չորս) հանդիպումներից 4 (չորս) ամենաբարձր միավորներ վաստակած թիմերը անցնում են կիսաեզրափակիչ փուլ:

5.2.8. Կիսաեզրափակիչ փուլում հաղթող են ճանաչվում այն թիմերը, որոնք ստացել են առնվազն 2 (երկու) ձայն տվյալ մրցափուլի Արբիտրների կողմից:

5.2.9. Եզրափակիչ փուլի հաղթող է համարվում Արբիտրների առնվազն 2 ձայն հավաքած թիմը:

5.2.10. Քառորդ եզրափակիչ, կիսաեզրափակիչ և եզրափակիչ մրցափուլերում հայցվոր/պատասխանող ընտրությունը կատարվում է վիճակահանությամբ՝ վիճակի (մետաղադրամի) նետման միջոցով, հետևյալ կերպ. գույգերի բաժանված յուրաքանչյուր թիմի անդամ ընտրում է վիճակը (գիր կամ արծիվ), որից հետո Կազմակերպչի ներկայացուցիչը նետում է մետաղադրամը: Թիմի անդամի ճիշտ ընտրության դեպքում նրա թիմը հայցվոր/պատասխանողի ընտրության իրավունք է ստանում: Միավելու դեպքում ընտրության իրավունքը անցնում է հակառակորդ թիմին:

5.2.11. Յուրաքանչյուր փուլին մասնակցում է 3 (երեք) արբիտր:

5.2.12. Յուրաքանչյուր թիմի ելույթի համար տրամադրվում է առավելագույնը 40 (քառասուն) րոպե, որից առավելագույնը 5 (հինգ) րոպեն պետք է օգտագործվի պնդումների կամ առարկությունների համար:

5.2.13. Յուրաքանչյուր թիմի միայն 2 (երկու) անդամ կարող են հանդես գալ բանավոր ելույթի ժամանակ: Մրցույթի յուրաքանչյուր փուլում թիմի 1 (մեկ) լրացուցիչ անդամ կարող է երկու բանախոսների հետ նստել խորհրդատվական սեղանի շուրջ՝ որպես իրավական հարցերով խորհրդատու: Որպես խորհրդատու հանդես եկող անձը պետք է լինի տվյալ թիմի գրանցված

անդամներից մեկը: Մրցույթի տարբեր փուլերում՝ որպես խորհրդատու կարող են հանդես գալ նույն թիմի տարբեր անդամներ:

5.2.14. Յուրաքանչյուր մրցափուլում բանավոր ելույթների հերթականությունը հետևյալն է՝ ելույթ է ունենում 1-ին Հայցվորը, որին հաջորդում է 2-րդ Հայցվորի ելույթը: Այնուհետև, նույն հերթականությամբ ելույթ են ունենում 1-ին և 2-րդ Պատասխանողները, որից հետո Հայցվորներից մեկը ներկայացնում է իր թիմի պնդումները, իսկ Պատասխանողներից մեկն իր թիմի առարկությունները:

5.2.15. Ժամանակի ճշգրիտ պահպանմանը պետք է հետևի Մրցույթի Կազմակերպչի կողմից նշանակված ժամապահը:

5.2.16. Ժամապահի պարտականությունների մեջ է մտնում յուրաքանչյուր 5 (հինգ) րոպեն լրանալուն պես ելույթ ունեցող մասնակցին և արբիտրներին տեղեկացնել, թե որքան ժամանակ է մնացել մինչև ելույթի ավարտը:

5.2.17. Թիմի մասնակիցներից որևէ մեկի չօգտագործված ժամանակը չի կարող օգտագործվել թիմի մյուս մասնակցի կողմից:

5.2.18. Թիմերը կարող են արբիտրներին դիմել իրենց ելույթի համար նախատեսված ժամանակը երկարացնելու խնդրանքով՝ ելույթի համար նախատեսված ժամանակն ավարտվելուց անմիջապես հետո կամ ելույթի ավարտին նախորդող 1 (մեկ) րոպեի ընթացքում:

5.2.19. Արբիտրաժային տրիբունալի նախագահողը կամ որևէ այլ արբիտր, անհրաժեշտության դեպքում, նախագահողի համաձայնությամբ կարող է երկարաձգել որևէ ելույթ ունեցող թիմի ելույթի ժամանակը՝ առավելագույնը 10 (տաս) րոպեով:

5.2.20. Ելույթի ընթացքում մասնակիցները պետք է շփվեն բացառապես արբիտրների հետ:

5.2.21. Բանավոր ելույթի ժամանակ թիմի մասնակից անդամները ոչ նախագահող արբիտրներին պետք է դիմեն «հարգելի արբիտր», իսկ նախագահող արբիտրին «հարգելի նախագահող»:

5.2.22. Բանավոր ելույթների ժամանակ թիմերի անդամները պետք է կրեն ֆորմալ հագուստ:

5.2.23. Ոչ մի թիմ իրավունք չունի ծանոթանալ կամ այլ կերպ տեղեկանալ հակառակորդ թիմերի գրավոր աշխատանքներին, բացառությամբ ցանկացած մրցափուլում սահմանված իրենց ապագա մրցակիցների հայցվոր/պատասխանող հայցադիմումների: Անկախ վերոգրյալ սահմանափակումից, թիմերին թույլատրվում է կիրառել այլ թիմերի հայցադիմումներում և բանավոր ելույթներում օգտագործված այն փաստարկներն ու տեղեկությունները, որոնց տվյալ թիմը, սույն կանոններով նախատեսված կարգով, տեղեկացել է որևէ մրցափուլի ընթացքում:

5.3. Միակողմանի ընթացակարգ

5.3.1. Արտակարգ հանգամանքներում, երբ որևէ թիմ չի ներկայանում որևէ մրցափուլի, Մրցույթի Կազմակերպիչը, 15 (տասնհինգ) րոպե սպասելուց հետո, կարող է թույլատրել, որպեսզի մրցափուլն ընթանա միակողմանի (առանց հակառակորդ թիմի): Միակողմանի ընթացակարգում, ներկա գտնվող թիմը ներկայացնում է իր բանավոր հայտարարությունը, որը սովորական կարգով գնահատվում է արբիտրների կողմից: Այդ դեպքում, չներկայացած թիմը կտուգանվի սույն կանոններով նախատեսված չափով:

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մասնակիցների ինչպես գրավոր աշխատանքների, այնպես էլ բանավոր ելույթների գնահատումը իրականացվում է արբիտրների կողմից՝ 50-100 բալային (միավորների) սանդղակով:

Թիմերի գրավոր աշխատանքները և բանավոր ելույթները գնահատելիս արբիտրները պետք է հաշվի առնեն այն հանգամանքը, որ դատավարությունն իրականացվում է բացառապես մրցակցային սկզբունքով: Յուրաքանչյուր թիմ պետք է գնահատվի օբյեկտիվորեն՝ իր կողմից կատարված աշխատանքին համապատասխան, անկախ նրանից, թե տվյալ գնահատող արբիտրը Մրցույթի Խնդրում նկարագրված որ կողմին (Հայցվորին կամ Պատասխանողին) է ավելի շատ համակրում:

6.1. Գրավոր աշխատանքների գնահատում

6.1.1. Մինչև Մրցույթի բանավոր փուլի անցկացումը Կազմակերպչի կողմից ընտրված արբիտրներին տրամադրվում են մասնակիցների գրավոր աշխատանքները՝ դրանք գնահատելու և Կազմակերպչին վերադարձնելու նպատակով: Արբիտրներին նաև տրամադրվում է գրավոր աշխատանքների գնահատման թերթիկն՝ իր համապատասխան ուղեցույցով:

6.1.2. Գրավոր աշխատանքները գնահատելիս արբիտրները պետք է ուշադրություն դարձնեն հետևյալին.

6.1.2.1. Իրավաբանական վերլուծությանը (առավելագույնը 60 միավոր), որը ներառում է.

- ա) համապատասխան (ճիշտ/էական) փաստերին և հարցերին անդրադառնալը,
- բ) փաստարկներն արդյունավետ, օրիգինալ և ստեղծագործական մոտեցմամբ ներկայացնելը,
- գ) նախադեպերի և իրավական ակտերի ճիշտ և արդյունավետ օգտագործումը/կիրառումը,

դ) հակառակորդ կողմի հնարավոր հակափաստարկներին պատասխանելը:

6.1.2.2. Գրելու ձևին և որակին (առավելագույնը 40 միավոր), որը ներառում է.

- ա) գրավոր աշխատանքի ընդհանուր կառուցվածքը և տեսքը,
- բ) փաստարկների ներկայացման պարզությունը և հստակությունը,
- գ) գրելաոճի արդյունավետությունը,
- դ) փաստերն առանց որևէ խեղաթյուրումների ներկայացնելը,
- ե) խոսքի քերականական ու շարահյուսական ճշգրիտ ձևակերպումը:

6.1.3. Գրավոր աշխատանքներում փաստերի շարադրանքը գնահատելիս արբիտրները պետք է նկատի ունենան, որ այն սահմանափակվում է Մրցույթի խնդրի (գործի) փաստերով և Մրցույթի դատական գործից բխող անհրաժեշտ հետևություններով, ինչպես նաև այդ գործի պարզաբանումներով: Փաստերի շարադրանքը չպետք է պարունակի չապացուցված, խեղաթյուրված փաստեր, վիճահարույց հայտարարություններ կամ իրավական եզրահանգումներ: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն, որ Մրցույթի խնդրում որոշ էական փաստեր կանխամտածված ձևով հստակեցված չեն:

6.1.4. Թիմերի գրավոր աշխատանքները պետք է արբիտրների կողմից գնահատվեն ինքնուրույն և օբյեկտիվ:

6.1.5. Արբիտրներն իրավունք չունեն իրենց տրամադրված գրավոր աշխատանքները ցուցադրել կամ քննարկել որևէ երրորդ անձի հետ:

6.2. Բանավոր ելույթների գնահատում

6.2.1. Թիմերի յուրաքանչյուր բանախոսի ելույթը գնահատվում է յուրաքանչյուր մրցավույլից (հայցվոր և պատասխանող թիմերի ելույթներից) անմիջապես հետո՝ հաշվի առնելով հետևյալը.

- ա) բանավոր խոսքի հստակությունը,
- բ) ներկայացված փաստարկների պարզությունը, տրամաբանական կապն ու հաջորդականությունը,
- գ) բանախոսների պահվածքը, քաղաքավարությունն ու հավասարակշռվածությունը,
- դ) արբիտրների հարցերին հստակ պատասխանելու և դրանից հետո ելույթին հեշտությամբ վերադառնալու բանախոսի ունակությունը,
- ե) բանախոսի՝ փաստարկների արդյունավետ ներկայացման և արբիտրների հետ անհրաժեշտ մակարդակի երկխոսություն ծավալելու ունակությունը,
- զ) ամենաէական փաստերի և փաստարկների արդյունավետ օգտագործումը,
- է) ժամանակի արդյունավետ կառավարումը և ելույթն ավարտին հասցնելը,

ը) գործի փաստերին լիարժեք տիրապետելը,

թ) համապատասխան և կիրառելի օրենքների և նախադեպերի իմացությունը, դրանց ճիշտ և արդյունավետ օգտագործումը (կիրառումը):

6.2.2. Բանավոր փուլի ավարտից և թիմերին ժամանակավորապես դատասենյակից դուրս հրավիրելուց հետո, արբիտրներն իրավունք ունեն մտքեր փոխանակել և իրենց կարծիքը հայտնել թիմերի և թիմերի անդամների ելույթների վերաբերյալ, սակայն ոչ մի արբիտր իրավունք չունի որևէ ազդեցություն գործադրել մյուս արբիտրի գնահատման վրա:

6.2.3. Յուրաքանչյուր արբիտր պարտավոր է ինքնուրույն և օբյեկտիվ գնահատել թիմերի ելույթները:

6.3. Միավորների հաշվարկում

6.3.1. Յուրաքանչյուր թիմ գնահատվում է իր գրավոր աշխատանքների և բանավոր ելույթների համար:

6.3.2. Թիմի վերջնական գնահատականը՝ դա թիմի գրավոր աշխատանքների և բոլոր բանավոր ելույթների համար արբիտրների կողմից նշանակված միավորների հանրագումարն է:

6.4. Թիմերի գրավոր աշխատանքների միավորների հաշվում

6.4.1. Յուրաքանչյուր թիմի գրավոր աշխատանքների (հայցադիմումի և պատասխանի) միավորները հաշվարկվում են վեց տարբեր արբիտրների կողմից ստացված միավորների հիման վրա:

6.4.2. Երեք տարբեր արբիտրների կողմից յուրաքանչյուր թիմի Հայցադիմումին տրված միավորները գումարվում են, որոնց հանրագումարը բաժանվում է երեքի: Ստացված թիվը համարվում է տվյալ թիմի Հայցադիմումի վերջնական միավորը, եթե սույն Կանոններով սահմանված կարգով որևէ տույժեր չեն կիրառվել:

6.4.3. Նախորդ կետում նշված բանաձևով հաշվարկվում է նաև յուրաքանչյուր թիմի Պատասխանի միավորները: Արդյունքում, Հայցադիմումի և Պատասխանի միավորները գումարվում են և որոշվում է տվյալ թիմի գրավոր աշխատանքների ընդհանուր վերջնական միավորը (այսուհետ՝ «Գրավոր Փուլի Վերջնական Միավոր»):

6.4.4. Նախորդ կետում նշված բանաձևով հաշվարկված բոլոր թիմերի գրավոր աշխատանքներից ամենաբարձր միավորներ հավաքած աշխատանքը տվյալ թիմին արժանացնում է «Մրցույթի Գրավոր Փուլի Հաղթող Թիմ» մրցանակին:

6.5. Թիմերի բանավոր ելույթների միավորների հաշվում

6.5.1. Թիմերի յուրաքանչյուր փուլի ելույթի վերջնական միավորը որոշվում է տվյալ փուլում երկու բանախոսների ելույթների համար երեք արբիտրների կողմից նշանակված միավորների հանրագումարը բաժանելով երեքի: Ստացված թիվը համարվում է տվյալ փուլի համար թիմի բանավոր ելույթի վերջնական միավորը, եթե սույն Կանոններով նախատեսված կարգով տույժեր չեն կիրառվել (այսուհետ՝ «Բանավոր Ելույթի Վերջնական Միավոր»):

6.5.2. Վերոգրյալ բանաձևով հաշվարկվում են բոլոր փուլերում ունեցած թիմերի ելույթները, բացառությամբ Կիսաեզրափակիչ և Եզրափակիչ փուլերի:

6.5.3. Կիսաեզրափակիչ և Եզրափակիչ փուլերում յուրաքանչյուր արբիտր ունի մեկ «կողմ» կամ «դեմ» ձայնի իրավունք, որով և որոշվում է Մրցույթի Կիսաեզրափակիչ և Եզրափակիչ փուլերի հաղթող թիմերը:

6.6. Թիմերի վերջնական միավորների հաշվում

6.6.1. Մրցույթի յուրաքանչյուր փուլում (բացառությամբ Կիսաեզրափակիչ և Եզրափակիչ փուլերի) տվյալ թիմի վերջնական միավորը որոշվում է այդ թիմի Գրավոր Փուլի Վերջնական Միավորի և նախորդ բոլոր Բանավոր Ելույթների Վերջնական Միավորների հանրագումարով (այսուհետ՝ «Թիմի Վերջնական Միավոր»):

6.7. Բանախոսների բանավոր ելույթների միավորների հաշվում

6.7.1. «Մրցույթի երրորդ լավագույն բանախոս» մրցանակին արժանանում է այն բանախոսը, ով նախընտրական փուլի բոլոր չորս փուլերի արդյունքներով, տույժերի կիրառումից հետո (եթե այդպիսիք եղել են) և ստացած միավորներն իր ելույթների քանակի վրա բաժանելուց հետո ստացել է երրորդ առավելագույն միավորը:

6.7.2. «Մրցույթի երկրորդ լավագույն բանախոս» մրցանակին արժանանում է այն բանախոսը, ով նախընտրական փուլի բոլոր չորս փուլերի արդյունքներով, տույժերի կիրառումից հետո (եթե այդպիսիք եղել են) և ստացած միավորներն իր ելույթների քանակի վրա բաժանելուց հետո ստացել է երկրորդ առավելագույն միավորը:

6.7.3. «Մրցույթի լավագույն բանախոս» մրցանակին արժանանում է այն բանախոսը, ով նախընտրական փուլի բոլոր չորս փուլերի արդյունքներով, տույժերի կիրառումից հետո (եթե այդպիսիք եղել են) և ստացած միավորներն իր ելույթների քանակի վրա բաժանելուց հետո ստացել է առավելագույն միավորը:

6.8. Արդյունքների հրապարակումը

6.8.1. Մրցույթի բանավոր փուլի օրը թիմերին տրամադրվում է իրենց գրավոր աշխատանքները գնահատող յուրաքանչյուր արբիտրի գնահատման թերթիկի և նշանակված տուգանքների (եթե այդպիսիք կան), ինչպես նաև կցված դիտողությունների (եթե այդպիսիք կան) պատճենները:

6.8.2. Բանավոր փուլի յուրաքանչյուր մրցափուլի ավարտից հետո, Կազմակերպիչը տվյալ մրցափուլին մասնակցած յուրաքանչյուր թիմին հայտնում է նախորդ մրցափուլի ելույթները գնահատող արբիտրների կողմից նշանակված ընդհանուր միավորը և տեղեկացնում կիրառված տուգանքների (եթե այդպիսիք կան), ինչպես նաև կատարված դիտողությունների (եթե այդպիսիք կան) մասին:

7. ԱՐԲԻՏՐՆԵՐԸ

7.1. Արբիտրների ընտրության կարգը

7.1.1. Մրցույթի գրավոր աշխատանքները և բանավոր ելույթները գնահատելու նպատակով, Կազմակերպչի կողմից հրավիրվում են գործող իրավաբաններ, փաստաբաններ, դատավորներ, արբիտրներ, բուհերի դասախոսներ, ինչպես նաև մտավոր սեփականության իրավունքի բնագավառում մասնագիտացած տարբեր պետական մարմինների աշխատակիցներ և այլ մասնագետներ:

7.1.2. Արբիտրների աշխատանքը չի վարձատրվում և համարվում է նրանց կամավոր ներդրումը Հայաստանում մտավոր սեփականության իրավունքի բնագավառի զարգացման մեջ:

7.2. Արբիտրների հուշագրի գաղտնիությունը

7.2.1. Արբիտրների հուշագրի (այսուհետ՝ «Հուշագիր») բովանդակությունը (եթե այդպիսին տրամադրվել է արբիտրներին) խիստ գաղտնի է: Հուշագրի պատճենը գտած թիմերը պետք է անմիջապես, առանց ծանոթանալու դրա բովանդակությանը, այն վերադարձնեն Մրցույթի Կազմակերպչին: Հուշագրից օգտվող ցանկացած թիմ կզրկվի Մրցույթի հետագա փուլերին մասնակցելու իրավունքից, իսկ Կազմակերպչի որոշմամբ, տվյալ թիմի բոլոր անդամները կարող են նաև զրկվել հաջորդ տարվա Մրցույթին մասնակցելու իրավունքից:

7.3. Թիմի կրկնակի քննումը միևնույն արբիտրի կողմից

7.3.1. Արբիտրները չպետք է դատեն այն թիմերի հանդիպումները, որոնց նրանք արդեն հանդիպել են Մրցույթի նախորդ փուլերում: Սակայն, արբիտրների թվի ոչ բավարար լինելու կամ

հրավիրված արբիտրների բացակայության դեպքում, Կազմակերպիչն իրավունք ունի թույլատրել արբիտրներին դատել նույն թիմի ելույթը երկրորդ անգամ, եթե տվյալ մրցափուլի ժամանակ այդ թիմը հանդես է գալիս հակառակ կողմից (օր.՝ եթե նախորդ փուլում հանդես է եկել որպես հայցվոր, ապա տվյալ փուլում պետք է հանդես գա որպես պատասխանող): Այն դեպքերում, եթե արբիտրների բացակայության պատճառով կամ հետևանքով կարող է անհնարին դառնալ Մրցույթի հետագա անցկացումը, Կազմակերպիչը կարող է արբիտրներին թույլատրել մեկ անգամից ավել դատել և գնահատել միևնույն կողմից հանդես եկող միևնույն թիմի բանավոր ելույթը:

7.4. Մրցույթի ժամանակ արբիտրի և բուհերի ներկայացուցիչների միջև կապը

7.4.1. Մրցույթի ցանկացած փուլում պետք է հնարավորինս բացառել որևէ արբիտրի մասնակցությունը Մրցույթին, որը կապ ունի այն բուհի հետ, որը թիմ է ներկայացրել, ծանոթ է կամ այլ կերպ հարաբերվում է տվյալ թիմի անդամներից որևէ մեկի կամ թիմի մարզիչի հետ (այսուհետ՝ «Ծանոթ թիմ»), բացառությամբ արբիտրների թվի ոչ բավարար լինելու դեպքում և պայմանով, որ տվյալ արբիտրն իրավունք չունի մասնակցելու և գնահատելու Ծանոթ թիմի գրավոր աշխատանքները և (կամ) ելույթները: Արբիտրի կամ Կազմակերպչի տվյալ բուհի շրջանավարտը լինելու փաստը, չի կարող հիմք հանդիսանալ սույն կետում նշված պայմանի խախտում դիտարկելու համար:

7.4.2. Արբիտրները պետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն այն թիմի ելույթը գնահատելուց, որի որևէ անդամի կամ մարզիչի հետ նրանք անձնական կամ մասնագիտական հարաբերություններ ունեն, հատկապես, եթե այդ կապը կարող է ազդել նրանց անկողմնակալության վրա: Անկախ սույն կետով նախատեսված սահմանափակման՝ արբիտրները չպետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն մրցափուլին մասնակցելուց, եթե նրանք պարզապես ճանաչում են տվյալ թիմի անդամին, տվյալ բուհի հետ որոշակի հարաբերություններ ունեն, սակայն վստահ են, որ դա որևէ կերպ չի ազդի նրանց անկողմնակալության վրա: Յուրաքանչյուր նման դեպքում արբիտրները պարտավոր են այդ մասին տեղեկացնել Կազմակերպչին ու հակառակորդ թիմի անդամներին և միայն վերջիններիս համաձայնությունը ստանալուց հետո մասնակցել և գնահատել տվյալ թիմերի ելույթները:

7.4.3. Մրցույթի բանավոր փուլի ավարտին արբիտրներին խորհուրդ է տրվում, Մրցույթի ժամանակացույցով նախատեսված սահմաններում, թիմերին խորհուսական խոսքեր հղել իրենց ելույթների վերաբերյալ՝ զերծ (ձեռնպահ) մնալով այնպիսի տեղեկատվություն հաղորդելուց, որը կարող է բացահայտել արբիտրների Հուշագրի բովանդակությունը, առանձին բանախոսներին տրված միավորների քանակը կամ Մրցափուլի արդյունքները:

8. ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ

8.1. Տվյալ թիմի անդամ կամ շահագրգիռ անձ (տվյալ թիմի մարզիչ, թիմի անդամի բարեկամ, ընկեր կամ թիմը ներկայացրած բուհի ղեկավար (ռեկտոր, դեկան և այլն), դասախոս կամ թիմի շահերը ներկայացնող կամ թիմի շահերով հետաքրքրված որևէ այլ անձ) կարող է ներկա գտնվել միայն այն մրցափուլին, որին մասնակցում է տվյալ թիմը: Այս կանոնի խախտման մասին պետք է անմիջապես կամ մրցափուլի ավարտից հետո տեղեկացնել Մրցույթի Կազմակերպչին՝ առանց բանավոր մրցափուլի ընթացքը խանգարելու:

8.2. Այն դեպքում, երբ որևէ թիմի անդամ կամ շահագրգիռ անձ հաճախել է մեկ կամ ավելի այնպիսի թիմերի նախընտրական մրցափուլերի, որոնց դեմ տվյալ թիմը որևէ ապագա նախընտրական մրցափուլում մրցելու է, այդպիսի գործողությունը կոչվում է «Ուղղակի հետախուզություն»: Այն դեպքում, երբ որևէ թիմի անդամ կամ շահագրգիռ անձ հաճախում է այնպիսի մեկ կամ ավելի թիմերի նախընտրական մրցափուլերի, որոնց դեմ նախընտրական մրցափուլերում չի մրցելու, այդպիսի գործողությունը կոչվում է «Անուղղակի հետախուզություն»:

8.3. Ինչպես Ուղղակի այնպես էլ Անուղղակի հետախուզության դեպքում, հետախուզող թիմը (նույնիսկ, եթե հետախուզությունը կատարվել է շահագրգիռ անձի կողմից) գրկվում է իր լավագույն բանավոր ելույթի (առավելագույն միավորներ վաստակած փուլի) ողջ միավորներից:

9. ՏՈՒՅԺԵՐ

9.1. Գրավոր աշխատանքների նկատմամբ կիրառվող տույժեր

9.1.1. Սույն Կանոններով նախատեսված կարգով և չափով, յուրաքանչյուր թիմի գրավոր աշխատանքի նկատմամբ կարող են կիրառվել տույժեր, եթե խախտվել են Կանոններով նախատեսված համապատասխան պահանջները:

9.1.2. Յուրաքանչյուր թիմի գրավոր աշխատանքը, մեկ արբիտրի կողմից, կարող է գնահատվել նվազագույնը 50 (հիսուն) միավոր: Նվազագույն միավորով գնահատվելու դեպքում գրավոր աշխատանքներն այլևս տույժերի կիրառման ենթակա չեն՝ անկախ տույժերի չափից:

9.1.3. Կիրառված տույժերի, դրանց բողոքարկման կարգի և ժամկետների մասին թիմերի անդամները տեղեկացվում են նախընտրական Մրցույթի առաջին մրցափուլից առաջ:

9.1.4. Եթե բանավոր փուլում հանդես եկող թիմը ցանկանում է Կազմակերպչին տեղեկացնել այն մասին, որ այդ բանավոր փուլը դատող արբիտրը, սույն Կանոնների համաձայն, իրավունք չունի մասնակցելու և գնահատելու տվյալ մրցափուլը, ապա պետք է նախապես, նախքան բանավոր փուլի սկիզբը այդ մասին տեղեկացնի արբիտրի օգնականին և (կամ) Կազմակերպչին: Հակառակորդ թիմի անդամի կողմից արբիտրին ընդամենը ճանաչելը, բավարար հիմք չէ Մրցույթի տվյալ փուլում արբիտրի մասնակցությունն արգելելու համար:

9.2. Գրավոր աշխատանքների նկատմամբ կիրառվող տույժերի չափը

N	Խախտումների նկարագրությունը	Տույժի չափը
1.	Գրավոր աշխատանքի ուշացում	5 (հինգ) միավոր յուրաքանչյուր ուշացված օրվա համար: 10 (տաս) օր և ավել ժամկետով ուշացված աշխատանքները չեն ընդունվում և թիմը զրկվում է Մրցույթին մասնակցելու իրավունքից:
2.	<ul style="list-style-type: none"> - սխալ տառատեսակ - սխալ տառաչափ - սխալ տողաբացվածք - տողատակի բացատրությունների փոխարեն տեքստի վերջում ծանոթագրություններ - գրավոր աշխատանքներին ներկայացվող այլ պահանջների խախտումներ 	1 (մեկ) միավոր յուրաքանչյուր խախտման համար, սակայն տույժերի ընդհանուրը չափը չի կարող գերազանցել 5 (հինգ) միավորը
3.	Գրավոր աշխատանքի Կանոններով պահանջվող բաժինը չներառելը	5 (հինգ) միավոր յուրաքանչյուր չներառված բաժնի համար
4.	Որևէ բաժնի (վերնագրի) կամ ենթաբաժնի (ենթավերնագրի) չհամարակալումը	1 (մեկ) միավոր յուրաքանչյուր չհամարակալված բաժնի/ենթաբաժնի համար
5.	Գրավոր աշխատանքի տիտղոսաթերթում անհրաժեշտ տեղեկատվությունը չներառելը	2 (երկու) միավոր յուրաքանչյուր չներառված տեղեկատվության համար
6.	Գրավոր աշխատանքի անանունության խախտում (օր.՝ գրավոր աշխատանքում տվյալ բուհի անվան կամ բուհին վերաբերող որևէ այլ տեղեկատվության ներառում)	Գրավոր աշխատանքը կհամարվի Կազմակերպչին չներկայացված (ուշացված) և կկիրառվի 1-ին կետում նշված տույժը (5 միավոր յուրաքանչյուր ուշացված օրվա համար, իսկ 10 օր և ավել ժամկետով ուշացված աշխատանքները չեն ընդունվում և թիմը զրկվում է Մրցույթին մասնակցելու իրավունքից): Կազմակերպչին իրավունք ունի, սակայն պարտավոր չէ թիմին տեղեկացնել տվյալ խախտման մասին: Խախտման հայտնաբերման և վերացման պարտականությունը կրում է տվյալ թիմը՝ դրա բոլոր բացասական հետևանքներով:
7.	Գրագողություն (Պլագիատ)	15 (տասնհինգ) միավոր յուրաքանչյուր նախադասության համար:
8.	Լուսանցքներին ներկայացվող	5 (հինգ) միավոր յուրաքանչյուր լուսանցքի 5.1.1.3. կտում ներկայացվող պահանջների

պահանջների խախտում

խախտման համար:

9. Կանոնների 2.2. կետի խախտում

Տվյալ կանոնը խախտող որևէ մասնակից կզրկվի ինչպես տվյալ տարվա, այնպես էլ հաջորդ տարիների մրցույթներին մասնակցելու իրավունքից: Սույն տույժը կկիրառվի նաև այն դեպքերում, եթե խախտումը բացահայտվել է Մրցույթն ավարտվելուց հետո:

10. Կանոնների 2.7. կետի խախտում

Տվյալ կանոնը խախտող որևէ թիմ կզրկվի ինչպես տվյալ տարվա, այնպես էլ հաջորդ տարվա մրցույթներին մասնակցելու իրավունքից: Սույն տույժը կկիրառվի նաև այն դեպքերում, եթե խախտումը բացահայտվել է Մրցույթն ավարտվելուց հետո:

9.3. Գրագորություն (Պլագիատ)

9.3.1. Գրագորությունը ուրիշի ստեղծագործության կամ դրա մի մասի սեփականացումն է և դրանք՝ որպես իր սեփական մտքի արդյունք, ներկայացնելն է, այսինքն՝ երրորդ անձի ստեղծագործության կամ դրա զգալի (էական) մասի օգտագործումը՝ առանց հղում կատարելու այդ անձի և (կամ) ստեղծագործության անվան կամ աղբյուրի մասին:

9.4. Բողոքարկման ընթացակարգը

9.4.1. Եթե թիմի կարծիքով տեղի է ունեցել սույն Կանոնների որևէ խախտում, ապա տվյալ թիմը կարող է բանավոր մրցափուլի (որի ընթացքում կատարվել է նշված խախտումը) ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) րոպեի ընթացքում ենթադրյալ խախտման մասին տեղեկացնել արբիտրի օգնականին և Կազմակերպչին՝ հստակ նշելով խախտման բնույթն ու դրանում ներգրավված անձանց անունները:

9.4.2. Թիմերը ոչ մի դեպքում չեն կարող ուղղակի դիմել արբիտրներին՝ կապված հնարավոր տույժի կամ սույն Կանոնների խախտման հետ:

9.4.3. Ցանկացած թիմի կողմից այս կետում ներկայացված ընթացակարգային պահանջների խախտման դեպքում թիմի բողոքարկումը չի քննարկվի:

9.4.4. Եթե մեկ կամ ավելի արբիտրներ հայտնաբերել են բանավոր մրցափուլի պահանջների խախտում, ապա նրանք պետք է արբիտրի օգնականին բանավոր կամ գրավոր տեղեկացնեն այդ խախտման մասին՝ բանավոր մրցափուլի ավարտից 5 (հինգ) րոպե առաջ: Խախտման մասին պետք է տեղեկացնել արբիտրի օգնականին՝ առանց մյուս արբիտրների և (կամ) մասնակիցների ուշադրությունը գրավելու:

9.4.5. Արբիտրի օգնականը չպետք է մասնակիցներին կամ թիմերին տեղեկացնի, որ խախտումը նկատվել է արբիտրի կողմից:

9.5. Արբիտրների կողմից տույժերի կիրառման բացառումը

9.5.1. Տույժեր նշանակելու և միավորները նվազեցնելու իրավունքը վերապահված է բացառապես Կազմակերպչին:

9.5.2. Արբիտրներն իրավունք չունեն կիրառել որևէ տույժ:

9.6. Բանավոր փուլերում կիրառվող տույժերը

Տույժերի առկայության դեպքում, արբիտրների կողմից յուրաքանչյուր բանախոսին տրված միավորները Կազմակերպիչը նվազեցնում է՝ տվյալ բանախոսի նկատմամբ կիրառված տույժերի միավորների քանակով:

N	Խախտումների նկարագրությունը	Տույժի չափը
1.	Բանավոր հաղորդակցություն բանախոսների միջև կամ բանախոսների և դահլիճում ներկա գտնվող այլ անձանց (այդ թվում արբիտրների) միջև (բացառությամբ ելույթի ժամանակ արբիտրի կամ արբիտրի օգնականի հետ սահմանված կարգով հաղորդակցության):	Առաջին նկատողություն՝ 0 (զրո) միավոր Երկրորդ նկատողություն՝ 5 (հինգ) միավոր Երրորդ նկատողություն՝ 10 (տաս) միավոր Չորրորդ և հաջորդող նկատողություններ՝ 20 (քսան) միավոր
2.	Այլ թիմերի աշխատանքներին որևէ անթույլատրելի եղանակով ծանոթանալը:	Առաջին դեպք՝ 60 (վաթսուն) միավոր Երկրորդ դեպք՝ Մրցույթին մասնակցելու իրավունքից զրկում
3.	Թիմի ինքնությունը չբացահայտելու կանոնի խախտում	Առաջին դեպք՝ 60 (վաթսուն) միավոր Երկրորդ դեպք՝ Մրցույթին մասնակցելու իրավունքից զրկում
4.	Ոչ պատշաճ և իրավաբանին անհարիր պահվածք կամ վարքագիծ	5-10 միավոր՝ արբիտրի միջնորդության դեպքում
5.	Ակնհայտ արհամարհանք ընթացակարգի և կանոնների պահանջների նկատմամբ	30 (երեսուն) միավոր
6.	Անպատշաճ վարքագծի դրսևորում արբիտրների, հակառակորդ թիմի անդամների, Կազմակերպչի և (կամ) արբիտրների օգնականների նկատմամբ	30 (երեսուն) միավոր
7.	Մրցափուլին թիմի չներկայանալը	100 (հարյուր) միավոր
8.	Բջջային հեռախոսներից, համակարգիչներից կամ այլ էլեկտրոնային սարքավորումներից օգտվելը բանավոր մրցափուլերի ժամանակ	Առաջին դեպք՝ 10 (տաս) միավոր Երկրորդ դեպք՝ 20 (քսան) միավոր Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ դեպք՝ 50 (հիսուն) միավոր

9.7. Տույժերի մասին ծանուցում և բողոքարկում

Կազմակերպիչը, հնարավորինս սեղմ ժամկետներում թիմերին տեղեկացնում է կիրառված տույժերի մասին, ինչպես նաև նրանց տեղեկացնում տվյալ որոշումը բողոքարկելու կարգի մասին:

10. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Զգուշացումներ և խնդրանքներ

10.1.1. Որևէ թիմ կամ թիմի անդամ Մրցույթի Խնդրի որևէ իրավաբանական հարցի շուրջ չպետք է դիմի որևէ պետական մարմին՝ որևէ հարցում և (կամ) պարզաբանում ստանալու և հետագայում դրանք Մրցույթի բանավոր և (կամ) գրավոր փուլերում օգտագործելու նպատակով: Ձեռք բերված որևէ հարցում և (կամ) պարզաբանում չի կարող օգտագործվել Մրցույթի բանավոր և (կամ) գրավոր փուլերում:

10.1.2. ՆՄԱՆԱՏԻՊ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻ ՓՈՐՁԸ ՎԿԱՅՈՒՄ Է ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՐՈՇ ՊԱՐՏՎՈՂ ԹԻՄԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՀԱՇՎԵԼ ԻՐԵՆՑ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ: ՀԱՍԿԱՆԱԼԻ Է, ՈՐ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՇՎՏԵԼԸ ԲԱՎԱԿԱՆԻՆ ԲԱՐԴ Է, ՄԱԿԱՅՆ ՊԵՏՔ Է ՀԻՇԵԼ, ՈՐ ՄԻՇՏ ԼԻՆՈՒՄ ԵՆ ՀԱՂԹՈՂՆԵՐ ԵՎ ՊԱՐՏՎՈՂՆԵՐ: ՄԵԿ ԱՆԳԱՄ ՊԱՐՏՎԵԼԸ ԴԵՌԵՎՍ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ, ՈՐ ՀԱՋՈՐԴ ԱՆԳԱՄ ՀԱՂԹԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՅԼԵՎՍ ՉԻ ԼԻՆԻ: ԲԱՑԻ ԱՅԴ ՉՊԵՏՔ Է ՄՈՌԱՆԱԼ, ՈՐ ՄԱ ԴԱՏԱԽԱՂ Է, ՈՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՎ ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆ Է, ԱՅԼ ՈՉ ԹԵ ՀԱՂԹԵԼԸ: ՀԵՏԵՎԱԲԱՐ, ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՅՍ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՎԵՐԱԲԵՐՎԵԼ ՈՐՊԵՍ ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ: ԱՅՍ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԵԼ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄՆԵԼՈՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՄ ԲՈՒՀԻ ՎԱՐԿԱՆԻՇԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ: ՀԵՏԵՎԱԲԱՐ ԱՅՆ ՉԻ ԿԱՐՈՂ ՆԱԵՎ ԴԻՏՎԵԼ ՈՐՊԵՍ ՏՎՅԱԼ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԱՄ ԲՈՒՀԻ ՎԱՐԿԱՆԻՇԻՆ ՎՆԱՍ ՀԱՍՑՆՈՂ ՄԻՋՈՑ, ԵԹԵ ՏՎՅԱԼ ԲՈՒՀԻ ԹԻՄԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ ՉՎԵՐԱԴԱՌՆԱ ԻՐ ԲՈՒՀ:

10.2. Տեսագրում և ձայնագրում

10.2.1. Մրցույթի որևէ բանավոր փուլի ժամանակ, որևէ անձի կողմից, աուդիոձայնագրում և տեսաձայնագրում չի թույլատրվում: Նման ձայնագրություններ կարող են իրականացվել միայն Կազմակերպչի կողմից՝ այդ նյութերով Մրցույթի մասին հոլովակներ պատրաստելու համար, որոնք կարող են օգտագործվել կրթական նպատակներով, ինչպես նաև Մրցույթի հաջորդ

տարիների կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ դրամական միջոցներ ձեռքբերելու (հայթայթելու) նպատակով:

10.2.2. Մրցույթի Կազմակերպչի համաձայնությամբ կամ թույլտվությամբ աուդիտայնագրում և (կամ) տեսաձայնագրում կարող է թույլատրվել բացառապես Եզրափակիչ փուլում, ինչպես նաև կարճատև ձայնագրություններ այլ փուլերում՝ լրագրողների կողմից:

10.3. Համակարգիչներից, բջջային հեռախոսներից կամ այլ էլեկտրոնային սարքավորումներից օգտվելը

10.3.1. Բանավոր փուլի ժամանակ մասնակիցներին արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից, համակարգիչներից կամ այլ էլեկտրոնային սարքավորումներից: Բանավոր յուրաքանչյուր մրցափուլի ողջ ընթացքում դրանք բոլորը պետք է անջատված լինեն:

10.4. Մրցանակներ

10.4.1. Մրցույթի մասնակիցները կարող են արժանանալ հետևյալ մրցանակներին.

- Մրցույթի լավագույն բանախոս,
- Մրցույթի երկրորդ լավագույն բանախոս,
- Մրցույթի երրորդ լավագույն բանախոս,
- Մրցույթի գրավոր փուլի հաղթող թիմ,
- Մրցույթի բանավոր փուլի հաղթող թիմ:

10.4.2. Մրցույթի բանավոր և գրավոր փուլերի հաղթող թիմերի և լավագույն բանախոսների համար, Կազմակերպչի կողմից, կարող են նախատեսվել նաև այլ մրցանակներ:

10.4.3. Մրցույթի վերաբերյալ այլ մանրամասներին կարելի է ծանոթանալ www.ipr-center.org կայքից:

10.5. Կանոնները, դրանց փոփոխությունները և լրացումները

10.5.1. Մրցույթի յուրաքանչյուր տարվա նոր կամ վերանայված կանոններն ուժի մեջ են մտնում Կազմակերպչի կայքում (www.ipr-center.org) դրանք հրապարակվելու պահից: Տվյալ տարվա կանոններն ուժի մեջ մտնելու պահից նախորդ տարվա կանոններն իրենց ուժը կորցնում են: Նոր կամ վերանայված կանոնները հետադարձ ուժ չունեն:

10.6. Մրցույթի կազմակերպման և անցկացման իրավունքը

10.6.1. Սույն Մրցույթի կազմակերպման և անցկացման նկատմամբ բոլոր տեսակի իրավունքները պատկանում են «Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամին:

10.6.2. Մրցույթի կանոնները և դրանց փոփոխություններն ու լրացումները մշակվում են Կազմակերպչի կողմից:

10.7. Մրցույթի փաստաթղթերի նկատմամբ իրավունքները

10.7.1. Մրցույթի տվյալ տարվա Խնդրի (գործի) նկատմամբ բոլոր հեղինակային իրավունքները պատկանում են տվյալ տարվա Խնդիրը հեղինակողին (հեղինակողներին): Կազմակերպչին իրավունք ունի օգտագործել Խնդիրը բացառապես կրթական նպատակներով:

10.7.2. Կազմակերպչին ներկայացված բոլոր գրավոր աշխատանքները կարող են անարգել, առանց որևէ սահմանափակումների, օգտագործվել Կազմակերպչի կողմից սույն Կանոններով նախատեսված կարգով, ինչպես նաև բոլոր տեսակի գիտական և կրթական նպատակներով:

10.8. Մրցույթի կանոնների հետ համաձայնվելը

10.8.1. Մինչև մասնակցության հայտ ներկայացնելը կամ մինչ Մրցույթին մասնակցելը, Մրցույթի յուրաքանչյուր մասնակից պարտավոր է (թիմի անդամ, թիմի ղեկավար, կամավոր, դատավոր և այլն) ծանոթանալ սույն Կանոններին, իսկ հարցերի դեպքում դիմել Մրցույթի Կազմակերպչին: Յուրաքանչյուր մասնակից կրում է Մրցույթի Կանոններին լիարժեք չտիրապետելու հետ կապված բոլոր ռիսկերը և հետևանքները:

10.8.2. Մրցույթի մասնակցության հայտ ներկայացնելը և Մրցույթին մասնակցելը համարվում է համաձայնություն Մրցույթի տվյալ տարվա կանոնների հետ, ինչպես Մրցույթին մասնակցող յուրաքանչյուր անձի (թիմի անդամ, թիմի ղեկավար, կամավոր, դատավոր և այլն), այնպես էլ թիմը ներկայացնող բուհի ղեկավարության կողմից: